ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 5/1 , ՀԵՌ.(374-15) 522522

« 12 » նոյեմբերի 2025թ.

№ ՄՄ/34.3-Մ2-3/6162-2025

«Հայաստանի էլեկտրական ցանցեր»
ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի
նախագահի տեղակալ
Սուրեն Կարայանի ներկայացուցիչ
Վարդան Ալոյանին
(ՀՀ, ք. Արթիկ, Իսահակյան 32)

Ի պատասխան «Հայաստանի էլեկտրական ցանցեր»
ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ
Սուրեն Կարայանի 30.10.2025թ. գրության՝

Հարգելի պարոն Ալոյան,

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժան վերանայելու և 01.11.2024-01.10.2025թթ. ժամանակահատվածում ընկերության անհրաժեշտ հասույթի ու գնված էլեկտրական էներգիայի արժեքի փաստացի և հաշվարկային մեծությունների տարբերության արդյունքում առաջացած լրացուցիչ միջոցները վերջնական սպառողների սակագների նվազեցմանն ուղղելու առնչությամբ Ձեր առաջարկի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտնում է հետևյալը.

Հանձնաժողովը, իր 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների սահմանման ու վերանայման կարգի 3-րդ գլխի համաձայն, 2025 թվականի սեպտեմբերի 15-ից իր նախաձեռնությամբ արդեն իսկ սկսել է ինչպես «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագների, այնպես էլ

սակագնային կարգավորման ենթակա խոշոր արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), և էլեկտրաէներգետիկական շուկայում ծառայությունների մատուցման սակագների վերանայման գործընթացը:

Սակագների վերանայման վերը նշված գործընթացի շրջանակում գնահատվելու և սակագների հաշվարկներում հաշվի են առնվելու ոչ միայն նախորդ ժամանակահատվածում անհրաժեշտ հասույթի ու գնված էլեկտրական էներգիայի արժեքի փաստացի և հաշվարկային մեծությունների տարբերությունը, այլ նաև էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների տնտեսական գործունեության արդյունքների վրա ազդող բոլոր գործոնները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման կանխատեսվող տարեկան հաշվեկշռի, արտադրող կայանների վառելիքային ծախսերի, պետական երաշխիքով ներգրավված վարկերի մարման, սպասարկման ծախսերի փոփոխությունները և համակարգում վերջին տարում իրականացված ներդրումները: Բոլոր դրական և բացասական գործոնների գնահատման արդյունքում միայն պարզ կլինի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման անհրաժեշտության հարցը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերը նշված կարգի 22-րդ կետի համաձայն վերանայման գործընթացի համար նախատեսված է 80 աշխատանքային օր, մինչդեռ Հանձնաժողովը նախատեսում է սակագների վերանայման գործընթացն ավարտել մինչև տարեվերջ, որի արդյունքների վերաբերյալ կարող եք տեղեկանալ Հանձնաժողովի ինտերնետային կայքից (www.psrc.am):

Invalid signature

X

ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Signed by: MESROPYAN MESROP 2203720093

Մ. Մեսրոպյան

Կատարող՝ Մ. Մոմջյան ☎ 015-58-08-08 (329)

Ս	գանձված է	Ա
Ե	Tax perçue	Y
Փ		P
Ո		O
Ս		S
Տ		T

13 NOV 2025

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
ՄՄ/34.3-Մ2-3/6162-2025 պ/տ

LO130486093AM

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ Սուրեն Կարայանի ներկայացուցիչ Վարդան Ալոյանին
Armenia ՇԻՐԱԿ ք. Արթիկ, Իսահակյան 32

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 21.11.25թ	

powered by Envelope, envelope.haypost.am

ARTIN
3002
14 NOV 2025
BUCUREȘTI
MAHALA
ARMENIA

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ Սուրեն Կարայանի ներկայացուցիչ Վարդան Ալոյանին ՇԻՐԱԿ ք. Արթիկ, Իսահակյան 32

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

Առաջնային/Priority
Օդային/By airmail

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO130486093AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0130486093AM

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ՄՄ/34.3-Մ2-3/6162-2025 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN
24 NOV 2025